


**ՆԱՍԱԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ
ՄԵԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Արդ, ո՞ր է հարուստներու ուրախութիւնը եւ կամ անոնց մխիթարութիւնը, ո՞վ աղքատ, որ կը ցանկաս եւ կը տենջաս եւ կը տխրեցնես քու հեշտ եւ խաղաղ կեանքդ, ինքզինքդ դժբախտ մը եւ թշուառակամ մը կը նկատես եւ կ'արհամարհես քու թանկագին հաստատութիւնդ: Գողերէն վախճալու կարիքը չունիս եւ ոչ ալ աւագակներէն երկիրդելու: Պէտք չունիս մտահոգուելու ո՛չ դաշտին խոտերով եւ ոչ ալ լեռներու արօտավայրերով: Պէտք չունիս հովիւներու նենգութենէն վախճալու եւ ոչ ալ գազաններու յափշտակութենէն: Պէտք չունիս բռնատրոներու բռնութիւններէն եւ ոչ ալ իշխաններու կալանքներէն դողալու: Նախանձոտները չեն նախանձիր քեզի, քակահատները չեն խաբեր քեզ, ոչ որք կը վախճաս եւ ոչ ալ կ'անհանգստանաս: Իշխաններու վախը եւ տէրերու բարկութիւնը չեն կրնար սարսափեցնել աղքատը, ոչ որ կրնայ կողոպտել աղքատը եւ կամ նեղել զայն եւ սպառնալ անոր: Հարուստը անհանգստացած է եւ ահագանգի տակ կը գտնուի, իսկ աղքատը կը ծաղրէ զայն: Հպարտ իշխանը ամբարտաւան է հարուստին նկատմամբ, իսկ աղքատը անկարելոր կը նկատէ զայն: Երկիրը լեցուն է գողերով եւ աւագակներով, բայց աղքատը չի վախճար անոնցմէ: Հրապարակները լեցուն են քակահատներով եւ բռնատրոներով, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով: Դատարոները գայլ եւ գազան դարձած են, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով, որովհետեւ չքաւորութեան պատճառաւ, իր կեանքը մեծապէս խաղաղ է, զերծ մտահոգութիւններէ, ազատ բոլորին դիմաց, առանց վախի, առանց նախանձի, առանց դիսի եւ հեռու շատ մը մոլութիւններէ:



Ի՞նչ է Սարկաւագին պաշտօնը:

Սարկաւագը սպասաւորն է Սուրբ պատարագի Սեղանին: Ան միջնորդն է ժողովուրդին եւ պատարագի քահանային միջեւ: Իր պարտականութիւններն են՝ խընկարկել, Աւետարան կարդալ, վերաբերում կատարել, ժողովուրդը առաջնորդել Աստուծոյ երկրպագելու եւ ուշադրութեամբ հետեւելու արարողութեան, քահանայէն օրհնութիւն հայցելու ժողովուրդին համար, Ս. Սեղանէն ստանալ Քրիստոսի յայտնութեան աւետիսը եւ զայն ողջոյնով փոխանցել ժողովուրդին: Իսկ արարողութեան լրումին Փրկչին մարմինն ու արիւնը ճաշակելու:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագրի քերթ



ԺԳ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 31 ՅՈՒՆՈՒՄ 2021** ԹԻԻ

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Եւ. 63.7-18 Բ. Տիմ. 3.1-12
ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 6.22-38

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը, տեսաւ թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձինն գացին, իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով, թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնասում եկան Յիսուսը փնտռելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին. «Վարդապետ, ե՞րբ եկար հոս»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտռէք ոչ թէ որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ՝ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէք ապահովել այն կերակուրը, որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»:
Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր՝ որ ինք դրկեց»:

Անոնք ըսին. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք: Ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար»:

Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է, որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը այն է՝ որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»:

Անոնք ըսին. «Տէ՛ր, միշտ տուր մեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը: Ան, որ ինձի կու գայ՝ բնաւ պիտի չանօթեմայ եւ ան, որ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք, որ Հայրը ինձի կու տայ՝ ինձի պիտի գան եւ ես ինձի եկողը պիտի չմերժեմ, որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անոր՝ որ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՈՍԿԵԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Ըստ ազգային աւանդութեան, դեսպանութեամբ Հռոմէն հայոց Սանատրուկ թագաւորի որկուած հինգ հոգիներ էին, որոնց գլխատրին անունն էր Խռուսի, այսինքն ոսկի: Անոնք իրենց ճամբուն վրայ հանդիպեցան Թադէոս առաքեալին եւ աշակերտելով մկրտուեցան անկէ: Ոսկի քահանայ եւս ձեռնադրուեցաւ: Առաքեալին նահատակութենէն ետք Ոսկեանք Ծաղկոտն գաւառի Ծաղկէոյ լեռան վրայ, Եփրատի ափունքը գացին: Քառասուն տարիներ ճգնական կեանք վարելէ վերջ հոն, հայոց Արտաշէս թագաւորի եւ Սաթենիկ թագուհիի արքունիքը եկան քրիստոնէութիւն քարոզելու համար, բայց հազիւ յաջողեցան դարձնել թագուհիին ազգականները, որոնք Ալան էին ազգովին: Ոսկի մկրտեց զանոնք հոն, Եփրատի ակունքին մէջ, եւ անոնց գլխատրը կոչեց Սուրբաս: Ասոր վրայ է, որ Արտաւագո արքայորդի խողխողել տուաւ Ոսկեանները, 107-ին, իսկ Սուրբասանք եկան ամփոփեցին անոնց մարմինները, եւ անոնց տեղ իրենք կրօնաւորեցին:

ՍՈՒՔԻԱՍԱՆՔ

Տասնվեց կամ տասնութ Ալան պալատականներ, Արտաշէս թագաւորի հարսանիքին առթիւ, ըստ աւանդութեան, Հայաստան եկան Սաթենիկ թագուհիին հետ, Ոսկեաններէն մկրտուելով քրիստոնէայ դարձան: Անոնց նահատակութենէն ետք ճգնական կեանքի անձնատուր եղան նախ Ծաղկէոյ եւ ապա Սուկաւէտ լեռան վրայ:

Անոնք այնքան անհաղորդ մնացին մարդոց հետ, որ իրենց մարմինները վայրի քոշերու կամ մամռոտ քարերու կը նմանէին: Ալանաց Շապուհ թագաւորին մահէն վերջ երբ Գինգիանոս յաջորդեց իրեն, լսելով անոնց մասին, իրենց երկիրը հրաւիրեց զանոնք, ինչ որ մերժեցին, չուզելով մեկնիլ իրենց քրիստոնէական եւ ճգնաւորական հաւատքէն եւ կեանքէն: Ան, որ պաշտօն ընդունած էր զանոնք տանիլ իրենց հայրենիքը, երբ տեսաւ թէ ի դերեւ կ'ելլեն իր ջանքերը, անոնցմէ իւրաքանչիւրը պրկեց չորս չորս ցիցերու վրայ եւ խանձողեց ջահերով եւ լապտերներով, յետոյ ամէնքն ալ կոտորուեցան սուսերամահ, բայց երկու կրտսերագոյններէն, որոնք բոլորովին անձանօթ խորշերու մէջ ծածկուած մնացին երկարատեան, եւ հոն մեռան ու թաղուեցան հովիւներու ձեռքով:

ՀԱՐՑՈՒՄ
ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Յովնան Մանդակունի Հայրապետը Ի՞նչ կ'ըսէ Պահքի մասին

Պահեցողութիւնը շրթայի մը նման ամուր կը դարձնէ եւ կը պահէ բարոյական բոլոր առաքինութիւններն ու հաւատքի գործիւնը: Ան թշնամիին դէմ հզօր աշտարակ մըն է ու սատանայի բոլոր նետերուն դէմ ամուր պարիսպ մը:

Միայն ուտելիքներէ զրկուիլը չէ, որ պահք կը կոչուի, այլ՝ նաեւ բոլոր տեսակի մեղքերէ մաքրուիլը. Պահք է նաեւ չիօսիլը՝ մանաւանդ երբ հարցում մը եղած չէ կամ կարիքը զգացուած չէ խօսելու: Պահք է չքատրութիւնը, աղքատութիւնը, անելորդ ինչքերով չմտահոգուիլը, միայն օրուան կարիքները հոգալը եւ նոյն բաները

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

Սուրբ Հոգին կը փոխէ մեզ

Երբ ամբողջութեամբ յանձնուինք Սուրբ Հոգիին, ան մեր կեանքն ու կամքը պիտի նոյնացնէ Քրիստոսի կեանքին ու կամքին հետ: Այն ատեն պիտի սկսինք կատարել այնպիսի բաներ՝ որոնք նախապէս անկարելի կը թուէին մեզի: Պիտի կարենանք սիրել այնպիսի անձեր՝ որոնք նախապէս զգուելի ու անհանդուրժելի էին: Ի՞նչն է պատճառը նման փոփոխութեան: Փոփոխութեան պատճառը ուրիշ տեղ պէտք չէ փնտռել եթէ ոչ անփոփոխ եւ սակայն ամէն ինչ փոխող Սուրբ Հոգիին մեր հետ միանալուն եւ մեր՝ Սուրբ Հոգիին հետ միանալուն ու մէկ ըլլալուն մէջ: Նախապէս կը փորձէինք առանձին ծրագրել եւ գործել, իսկ Սուրբ Հոգին ընդունելէ ետք, ան եղաւ ծրագրողն ու գործողը մեր ճամբով:

Սուրբ Գիրքը կը փոխէ մեր կեանքը Կը պատմուի, թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձի կու գայ եւ ինքզինք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտեզի մը մէջ նստած երբ Սուրբ Գիրք կը կարդար, Ամերիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դո՛ւն, ո՛վ Ափրիկէցի, դո՛ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ Ափրիկէցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ ես Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ ճաշա եղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կրնայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Անիկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

Եթէ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

Եթէ յուսահատինք կարդանք Հռ. 8.31-38

Ի՞նչ կրնանք ըսել այս բոլորին դիմաց: Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ: Եթէ Աստուած իր Որդիին չխնայեց, այլ՝ մինչեւ իսկ զայն մահուան մատնեց մեզի համար, անոր հետ նաեւ ամէն բան պիտի չջնորդէ՞ մեզի: Ո՞վ կրնայ մեղադրել Աստուծոյ ընտրեալները: Ո՛չ որ, քանի Աստուած է արդարացնողը: Կամ ո՞վ պիտի դատաւարտէ: Յիսուս Քրիստո՞սը, որ մեզի համար մեռաւ՝ բայց մանաւանդ յարութիւն առաւ, եւ հիմա Աստուծոյ աջ կողմն է ու կը բարեխօսէ մեզի համար: Անշուշտ ո՛չ: Ո՞վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Քրիստոսի սէրէն: Նեղութիւնը, անձկութիւնը, հալածանքը, սո՞վը, մերկութիւնը, վտանգը կամ սո՞վը: Ինչպէս Սաղմոսներուն մէջ գրուած է. «Բեզի համար՝ մարդիկ մեզ կը սպաննեն ամէն օր, ոչխարի պէս սպանդանոց կը տանին»:

Բայց այս բոլորէն շա՛տ ատելի յաղթական դուրս կու գանք շնորհիւ անոր՝ որ մեզ սիրեց: Որովհետեւ համոզուած եմ, որ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ որեւէ գործիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: